

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հեռուստատեսության և ուղիղի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1075-29.09.2016-ԳԿ-010/0) վերաբերյալ:

1. 1-ին հոդվածի համաձայն նախատեսվում է օրենքի 52-րդ հոդվածի 1.1-ին մասը ճանաչել ուժը կորցրած, մասնավորապես, հիշյալ հոդվածի համաձայն ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է կաբելային (մալուխային) հեռուստաընկերությունների կողմից վերահեռարձակել Հայաստանի Հանրապետությունում գործող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների վերգետնյա եթերային այն ծրագրերը, որոնք ներառում են քարոզչական նյութ՝ տեղեկատվական,

խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ որևէ այլ ձևով: Հարկ է նկատի ունենալ, որ հիմնավորման մեջ անդրադարձ է արված հիշյալ դրույթներին, մասնավորապես, հիմնավորման համաձայն «օրենքով նախատեսվող արգելքն ուժը կորցրած է ճանաչվում, քանի որ վերջինս անտրամաբանական պահանջ է և ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրը ոչ ոք իրավունք չունի հետարձակել քարոզչական նյութ»: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, համաձայն որոնց ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրը քարոզչական նյութեր հրապարակելու արգելքն ամրագրված է, մասնավորապես, քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է: Այդ առումով օրենքի հիշյալ դրույթներն անտրամաբանական չեն և համահունչ են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթներին:

2. 2-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի համաձայն նախատեսվում է օրենքի 55.1-ին՝ «Ընդհանուր դրույթներ մասնավոր մուլտիպլեքտորի վերաբերյալ» հոդվածում կատարել փոփոխություններ, ըստ որի. «Մասնավոր մուլտիպլեքտորը պարտավոր է մուլտիպլեքսն իրականացնել սեփական կամ վարձակալած էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, որի սփուման տարածքը որոշում է մուլտիպլեքտորը՝ այդ մասին նշելով Ազգային հանձնաժողով ներկայացվող հայտում: Սփուման տարածքը կարող է ընդգրկել մեկ կամ մի քանի համայնք, մեկ կամ մի քանի մարզ, կամ ամբողջ երկիրը:»:

Մուլտիպլեքսորի սիոման տարածքի վերաբերյալ, հարկ է նշել, որ Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) բոլոր անդամ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված անալոգային հեռուստատեսային հեռարձակումից թվայինի անցման (GE06) եզրափակիչ ակտերի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում թվային հեռուստատեսային հեռարձակման համար ՀՄՄ հատկացվել է սահմանափակ կապուղի հանրապետության տարածքում թվային հեռարձակում իրականացնելու համար, որը չի կարող բավարարել նախագծով նախատեսված կարգով մասնավոր մուլտիպլեքսին կապուղիներ հատկացնելու համար, և կարող են հանգեցնել հանրապետության տարբեր բնակավայրերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հեռուստածրագրերի մատչելիության անհավասար պայմաններին:

Ներկայացված դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետին.

2) 3-րդ կետով առաջարկվում է օրենքի 55.1-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ: Առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, որովհետև տեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին առաջադրվում է կարգավորիչ և բովանդակային գնահատման կարողությունների պահանջներ ու գործառույթներ, որը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ վերապահված է բացառապես Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին:

3. 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է օրենքի 55.2-րդ հոդվածի 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել: Հիշյալ մասով կարգավորված են հանրային լուսմների հետ կապված հարաբերությունները, մասնավորապես, «Տեխնիկական փորձաքննության եզրակացությունն ստանալուց հետո առավելագույնը 15-օրյա ժամկետում Ազգային հանձնաժողովը կազմակերպում է հանրային լուսմներ, որոնց անցկացման վայրի և ժամի մասին հայտարարություն է հրապարակում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոն-

նական կայքում (www.azdarar.am)»։ Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ օրենքի 55.2-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերի համաձայն մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման համար դիմումների ներկայացման ժամկետի ավարտից հետո Ազգային հանձնաժողովը ցանցի ստեղծման նախագիծը և ժամանակացույցն իր ընտրած փորձագետներին ներկայացնում է տեխնիկական փորձաքննության, որը պետք է իրականացվի առավելագույնը վեց ամսվա ընթացքում։ Լիցենզիա տրամադրելու որոշումը Ազգային հանձնաժողովը կայացնում է տեխնիկական փորձաքննության եզրակացությունն ստանալուց հետո առավելագույնը երկու ամսվա ընթացքում՝ հիմք ընդունելով փորձաքննության և հանրային լսումների արդյունքները։ Այսինքն՝ հանրային լսումները հանդիսանալով ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն ապահովող, ինչպես նաև կարծիքների հավաքման կարևոր միջոցառում կարող են էական նշանակություն ունենալ Ազգային հանձնաժողովի կողմից լիցենզիա տրամադրելու կամ դիմումը մերժելու որոշում կայացնելիս։ Ելնելով վերոնշյալից՝ հիմնավորման կարիք ունի հանրային լսումներին առնչվող դրույթներն ուժը կորցրած ճանաչելու հարցը։

4. 6-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի փոփոխությունը կհանգեցնի հեռուստածրագրերի և դրանցում ներառված հեռուստատեսային միավորների հեղինակային և հարակից իրավունքների ոտնահարման։

5. 7-րդ հոդվածի համաձայն օրենքի 62-րդ հոդվածի 16-րդ մասը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչի արդյունքում տեղական հեռուստատաղիորնկերությունների լիցենզիաների երկարաձգմանն առնչվող դրույթները փոփոխության են ենթարկվում, մասնավորապես, լիցենզիան երկարաձգվում է յուրաքանչյուր տարածքում մինչև նշված տարածքը ներառող մարզում մասնավոր մուլտիպլեքսորի մուտքը, որից հետո հիշյալ հեռուստատաղիորնկերությունների լիցենզիան առանց մրցույթի փոխարինվում է մինչև 2020 թվականը գործող թվային հեռարձակման լիցենզիաներով։ Առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ գործող օրենքով նախատեսվել է նաև ժամանակավոր կարգավիճակ գործող համայնքային հեռուստատաղիո-

ընկերությունների համար, և նախատեսվում է, որ նրանք կարող են շարունակել անալոգային տիրույթում (գործող լիցենզիաների շրջանակներում, որի համար ևս անհրաժեշտ են հաճախություններ) շարունակել հեռարձակումը, մինչև նշված տարածքում նոր մրցույթների անցկացում, որից հետո արդեն միայն հաղթողները կկարողանան շարունակել գործունեությունը:

Հարկ է նշել նաև, որ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով «լիցենզիայի փոխարինում» հասկացություն սահմանված չէ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՁՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ նախատեսվում է մասնավոր մուլտիպլեքսորին հնարավորություն տալ մուլտիպլեքսն իրականացնել նաև վարձակալած էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, որի սփռման տարածքը կարող է ընդգրկել մեկ կամ մի քանի համայնք, մեկ կամ մի քանի մարզ կամ ամբողջ երկիրը, ուժը կորցրած ճանաչել մասնավոր մուլտիպլեքսորի ցանցի բաղադրիչների՝ մասնավոր մուլտիպլեքսորի սեփականությունը լինելու պարտադիր պահանջի մասին դրույթը, պարզեցնել անալոգիական հեռարձակման լիցենզիայով գործող հեռուստաընկերությունների հեռարձակման լիցենզավորումը, ինչպես նաև հանվում է՝ հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում հեռուստառադիոհաղորդումների վերահեռարձակման մասին ծանուցման ժամանակ հեռուստառադիոընկերությունների իրավատերերի հետ կնքած պայմանագրերի լուսապատճենների ներկայացման պահանջը:

Նախագծով կարգավորվող շրջանակներն առնչվում են հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման բնագավառում մասնավոր մուլտիպլեքսորների միջոցով մատուցվող ծառայությունների շուկայի հետ: Առաջարկվող փոփոխություններն ուղղված են մասնավոր մուլտիպլեքսորների գործունեության ազատականացմանը: Վերոնշյալ կարգավորումների պարագայում կձևավորվեն հավասար մրցակցային պայմաններ՝ փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռելով գործունեություն իրականացնել նշյալ շուկայում, կկրճատվեն մուլտիպլեքսորների միջոցով ծառայություն մատուցողների ֆինանսական ծախսերն, ինչն էլ կարող է հանգեցնել տվյալ շուկայում ծառայություն մատուցող մատակարարների (մուլտիպլեքսորների) միմյանց հետ մրցելու հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաև թվաքանակի ավելացմանը:

Հիմք ընդունելով նախնական և ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլերի արդյունքները՝ արձանագրվում է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա **դրական ազդեցություն հայտնաբերելու** եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է.

- Հնարավորություն տալ մասնավոր մուլտիպլեքսորին մուլտիպլեքսն իրականացնել նաև **վարձակալած** էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, որի սփռման տարածքը կարող է ընդգրկել մեկ կամ մի քանի համայնք, մեկ կամ մի քանի մարզ կամ ամբողջ երկիրը:
- Ուժը կորցրած ճանաչել մասնավոր մուլտիպլեքսորի ցանցի բաղադրիչների՝ մասնավոր մուլտիպլեքսորի սեփականությունը լինելու պարտադիր պահանջի մասին դրույթը:
- Անալոգիական հեռարձակման լիցենզիայով գործող հեռուստաընկերությունների հեռարձակման լիցենզիան առանց մրցույթի փոխարինել մինչև 2020թ-ը գործող թվային հեռարձակման լիցենզիայով:

Նախագծով նախատեսվող փոփոխությունները հնարավորություն կտան տնտեսավարող սուբյեկտներին զերծ մնալու լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտությունից, կպարզեցվի անալոգիական հեռարձակման լիցենզիայով գործող հեռուստաընկերությունների հեռարձակման լիցենզավորումը, իսկ ՀՀ հանրային հեռարձակման թվային ցանցի սփռման տարածքից ոչ փոքր չափով հեռարձակման թվային ցանց ստեղծելու պահանջի փոփոխությունը հնարավորություն կտա նաև փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին գործունեություն ծավալել տվյալ ոլորտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա **կնախապեսվի դրական ազդեցություն:**

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի վերաբերյալ**

««Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

**«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ
սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

- ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.
- բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Վեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:
Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
«Վեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի ընդունման դեպքում**

«Վեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Ուսումնասիրելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների և ծախսերի, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

Պ-1075-29.09.2016-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի (այսուհետ՝ օրենք) 52-րդ հոդվածի 1.1 մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 55.1-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Մասնավոր մուտիպլեքսորը պարտավոր է մուտիպլեքսն իրականացնել սեփական կամ վարձակալած էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, որի սփռման տարածքը որոշում է մուտիպլեքսորը՝ այդ մասին նշելով Ազգային հանձնաժողով ներկայացվող հայտում: Սփռման տարածքը կարող է ընդգրկել մեկ կամ մի քանի համայնք, մեկ կամ մի քանի մարզ, կամ ամբողջ երկիրը:»:

2. 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

3. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Եթերային հեռարձակման նպատակով մասնավոր մուտիպլեքսում հեռուստառադիոընկերություններին ընդգրկելիս մուտիպլեքսորը առաջնորդվում է տեղեկատվության բազմազանության, լրատվության միջոցների ազատության եւ անկախության սկզբունքներով: Մասնավոր մուտիպլեքսորը պարտավոր է իր մուտիպլեքսի տարողության մինչեւ 20 տոկոսը Ազգային հանձնաժողովի սահմանած ժամկետում, բայց ոչ շուտ, քան երեք ամսում հեռուստառադիոհեռարձակում իրականացնելու համար տրամադրել իր սփռման տարածքում անալոգային հեռարձակման լիցենզիայով գործող հեռուստառադիոընկերություններին, որոնց անալոգային հեռարձակման լիցենզիան Ազգային հանձնաժողովը առանց մրցույթի փոխարինում է մինչեւ 2020 թվականը գործող թվային հեռարձակման լիցենզիայով, ինչպես նաեւ՝ նոր ստեղծված ու Ազգային հանձնաժողովի կողմից լիցենզավորված հեռուստառադիոընկերություններին: Մուտիպլեքսորը մնացած հեռուստառադիոընկերությունները կարող է օգտագործել բացառապես սույն օրենքով նախատեսված կարգով վերահեռարձակում իրականացնելու նպատակով:

Սույն օրենքի 48 եւ 49 հոդվածներով սահմանված լիցենզավորման կարգերը մինչեւ 2020 թվականը չեն տարածվում անալոգային հեռարձակման լիցենզիայով գործող հեռուստառադիոընկերությունների վրա: Սույն հոդվածում նշված հեռուստառադիոընկերությունները չեն կարող տրամադրվել Հանրային հեռարձակման թվային ցանցում հեռարձակման իրավունք ունեցող հեռուստառադիոընկերությանը, բացառությամբ եթե այդ ընկերությունը հրաժարվում է Հանրային հեռարձակման թվային ցանցում հեռարձակման իրավունքից: Մուտիպլեքսորներն իրենց պաշտոնական ինտերնետային կայքերում հրապարակում են մատուցվող ծառայությունների տեսակների եւ սակագների, մուտիպլեքսում եւ մալուխային հեռարձակման համակարգերում ընդգրկվելու ընթացակարգերի եւ պահանջների, իրենց սփռման տարածքի, գտնվելու վայրի եւ մուտիպլեքսի առկա թողունակության մասին տեղեկությունները:»:

Հոդված 5. Օրենքի 55.2-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի բ) ենթակետը «ցանցի գործարկման ժամանակացույցը.» բառերից հետո միջակետը փոխարինել ստորակետով եւ լրացնել «սփռման տարածքը» բառերով:

2. 6-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

3. 7-րդ մասից հանել «եւ հանրային լուսամների» բառերը:

Հոդված 6. Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «ինչպես նաեւ ներկայացվում են վերը նշված հեռուստառադիոընկերությունների իրավատերերի հետ կնքված պայմանագրերի լուսապատճենները» բառերը:

Հոդված 7. Օրենքի 62-րդ հոդվածի 16-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«16. Մինչեւ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության սկիզբը Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է տեղական հեռուստառադիոընկերությունների գործունեությունը՝ գործող լիցենզիաների՝ առանց փոփոխությունների երկարաձգման միջոցով: Ազգային հանձնաժողովը սահմանում է տեղական հեռուստառադիոընկերությունների լիցենզիաների երկարաձգման կարգը եւ պայմանները, որոնք, սակայն, չեն կարող պարունակել հավելյալ պահանջներ, բացի ընկերության կողմից կիրառվող հեռարձակող սարքերի, ընկերության գործունեության (տեղության) եւ ընկերության մասին հանձնաժողով տեղեկատվություն ներկայացնելուց:

Լիցենզիան երկարաձգվում է յուրաքանչյուր տարածքում մինչեւ նշված տարածքը ներառող մարզում մասնավոր մուլտիպլեքսորի մուտքը, որից հետո հիշյալ հեռուստառադիոընկերությունների լիցենզիան առանց մրցույթի փոխարինվում է մինչեւ 2020 թվականը գործող թվային հեռարձակման լիցենզիայով: Սույն մասում նշված ընկերություններից լիցենզիայի երկարաձգման եւ տարեկան պետական տուրքեր չեն գանձվում:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը, որի հիմնական նպատակը հեռարձակման ոլորտ մասնավոր մուլտիպլեքսորի մուտքն ապահովելն ու նրա գործունեությունը կարգավորելն է: Այս փոփոխությունը բխում է Հայաստանի Հանրապետությունում եթերային հեռարձակման անալոգայինից թվային եղանակին անցնելու ընդհանուր գործընթացի պահանջից, որի արդյունքում դաշտում պետք է հայտնվի նոր օպերատոր՝ մասնավոր մուլտիպլեքսորը, որը, ըստ այդ օրենքի, իր սեփական ենթակառուցածքի միջոցով պիտի ապահովի Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում թվային հեռուստատեսության հեռարձակումը՝ թվային հեռարձակման արդեն գործող հանրային ցանցից անկախ: Սակայն կատարված փոփոխությունները, ցավոք, ոչ թե առաջընթաց են ապահովելու, այլ ընդհակառակը խոչընդոտելու են մասնավոր մուլտիպլեքսորների կայացումը, ավելին՝ թույլ չեն տալու այդ ոլորտում փոքր եւ միջին բիզնեսի զարգացումը՝ այստեղ էլ հաստատելով մեկ խաղացողի մենաշնորհ: Այսպես, օրենքի 55.1 հոդվածի 2-րդ մասի նոր դրույթը, համաձայն որի մասնավոր մուլտիպլեքսորը պարտավոր է մուլտիպլեքսն իրականացնել «սեփական էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, որի սփռման տարածքը չպետք է լինի ավելի փոքր, քան Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակման թվային ցանցի սփռման տարածքը», հնարավորություն է տալիս մուլտիպլեքսոր դառնալ միայն խոշոր ձեռնարկատերերին, իսկ փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչները ձեռնարկատիրության այս ոլորտ մուտք գործելու բավարար ռեսուրսներ չեն կարող ունենալ: Նման պահանջն անհամաչափ է ու չի բխում օբյեկտիվ անհրաժեշտությունից, եւ պատահական չէ, որ մասնավոր մուլտիպլեքսորի լիցենզավորման համար 2016թ. ապրիլի 30-ին հայտարարված առաջին իսկ մրցույթը համարվել է չկայացած՝ սահմանված ժամանակահատվածում դիմում չներկայացնելու հիմքով: Նկատի ունենալով մուլտիպլեքս համակարգի տեխնիկական ճկունությունը, ռադիոալիքների մեծ քանակությունը, որ հնարավոր է հեռարձակել մեկ հաճախականությամբ, որեւէ տեխնիկական անհրաժեշտությունից չի բխում ՀՀ ողջ տարածքի չափով հեռարձակման թվային ցանց ստեղծելու պահանջը: Նման ցանց կարելի է ստեղծել քաղաքի, մարզի եւ, ընդհանրապես, որեւէ համայնքի տարածքի շրջանակներում՝ այդպիսով հնարավորություն տալով նաեւ ձեռնարկատիրությամբ զբաղվելու փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչներին: Այս համատեքստում անհասկանալի է նաեւ, թե ինչու է մուլտիպլեքսորը պարտավոր օգտագործել իր սեփական էլեկտրոնային հաղորդակցության ցանցը՝ այդ թվում հենասյուններ, մալուխներ, եւ այլն: Մուլտիպլեքսորը կարող է, օրինակ, հենասյուններ կամ ենթակառուցցային այլ օբյեկտներ վարձակալել այլ տնտեսվարող սուբյեկտից եւ այդպիսով հնարավորություն ունենալ իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն: Նման պահանջները նվազեցնելու են մասնավոր մուլտիպլեքսորների քանակը, այն հասցնելով մեկի: Այսինքն՝ օրենսդրական փոփոխությունը եւ դրա արդյունքում մուլտիպլեքսորների կենտրոնացումը խնդրահարույց է դառնալու նաեւ տնտեսական ազատ մրցակցության սահմանադրական իրավունքի տեսանկյունից: Առաջարկվող կարգավորումը անմիջապես հանգեցնելու է նրան, որ դաշտում գործող նվազագույն թվով մուլտիպլեքսորները (իսկ գուցե նաեւ մեկ մասնավոր մուլտիպլեքսորը) արագորեն հայտնվելուն են մենաշնորհային կամ գերիշխող կարգավիճակում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով: Ահա այս հետեւանքներից խուսափելու համար անհարժեշտ է ունենալ նոր օրենք, որի հիմնական նպատակը մուլտիպլեքսորների գործունեության ազատականացումն է, տեղական փոքր մուլտիպլեքսորների գործունեության ապահովումը, ինչպես նաեւ դաշտում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող խաղացողների բացառումը: 2015 թվականի դեկտեմբերի 18-ի օրենքով 55.1 հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ Ազգային հանձնաժողովն օրենքի 48-49 հոդվածներով նախատեսված կարգով մրցույթներ է անցկացնում, որոնց արդյունքում լիցենզիա է տալիս հեռուստաընկերություններին՝ նրանց մասնավոր մուլտիպլեքսում ընդգրկելու համար: Սա անընդունելի է, քանի որ այս դեպքում արդեն գործող

անալոգային հեռարձակողները դարձյալ պիտի անցնեն մրցութային նոր գործընթաց: Մնալով պարզեցված լիցենզիայի կողմնակից, որին վաղ թե ուշ հարկ կլինի անցնել, այս փուլում առաջարկում ենք միջանկյալ լուծում: Այն է՝ անալոգային հեռարձակման լիցենզիայով գործող հեռուստառադիոընկերությունների հեռարձակման լիցենզիան Ազգային հանձնաժողովն առանց մրցութային փոխարինում է մինչև 2020 թվականը գործող թվային հեռարձակման լիցենզիայով, ինչն այս հեռուստաընկերություններին հնարավորություն է տալիս ընդգրկվելու մասնավոր մուլտիպլեքսում: Իսկ մրցութային հայտարարվում է միայն նոր ստեղծվող ընկերությունների համար: 2015 թվականի դեկտեմբերի 18-ի օրենքով 62-րդ հոդվածը լրացվել է 2010 թվականին թվային հեռարձակման լիցենզիա չստացած՝ մարզերում անալոգային լիցենզիայով գործող հեռուստաընկերություններին վերաբերող հետեւյալ բովանդակությամբ 16-րդ մասով. «Մինչև մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության սկիզբը Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է տեղական հեռուստառադիոընկերությունների գործունեությունը՝ գործող լիցենզիաների՝ առանց փոփոխությունների երկարաձգման միջոցով: Ազգային հանձնաժողովը սահմանում է տեղական հեռուստառադիոընկերությունների լիցենզիաների երկարաձգման կարգը եւ պայմանները, որոնք, սակայն, չեն կարող պարունակել հավելյալ պահանջներ, բացի ընկերության կողմից կիրառվող հեռարձակող սարքերի, ընկերության գործունեության (տեղության) եւ ընկերության մասին հանձնաժողով տեղեկատվություն ներկայացնելուց: Լիցենզիան երկարաձգվում է յուրաքանչյուր տարածքում մինչև նշված տարածքը ներառող մարզում հեռարձակման նոր մրցութային անցկացումը եւ մրցութային արդյունքում հաղթող ճանաչելը: Սույն մասում նշված ընկերություններից լիցենզիայի երկարաձգման եւ տարեկան պետական տուրքեր չեն գանձվում:»:

Այս դրույթն անընդունելի է, քանի որ անհավասար պայմաններ է ստեղծում թվային եւ անալոգային հեռարձակմամբ գործող ընկերությունների միջև, ավելին՝ կարող է հանգեցնել անալոգային հեռուստաընկերությունների աշխատանքի դադարեցմանը ավելի շուտ, քան ի հայտ կգա մասնավոր մուլտիպլեքսորը եւ կընդգրկի նրանց թվային ցանցում: Ոստի՝ մնալով պարզեցված լիցենզիայի կողմնակից, որին վաղ թե ուշ հարկ կլինի անցնել, այս փուլում մենք մեր նախագծով առաջարկում ենք միջանկյալ լուծում: Այն է. անալոգային հեռարձակման լիցենզիայով գործող հեռուստառադիոընկերությունների հեռարձակման լիցենզիան Ազգային հանձնաժողովն առանց մրցութային փոխարինում է մինչև 2020 թվականը գործող թվային հեռարձակման լիցենզիայով, ինչն այս հեռուստաընկերություններին հնարավորություն է տալիս ընդգրկվելու մասնավոր մուլտիպլեքսում: Իսկ մրցութային հայտարարվում է միայն նոր ստեղծվող ընկերությունների համար: Նախագիծն անդադարեցնել է նաեւ 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված օրենքով կատարված փոփոխություններին՝ առաջարկելով ուժը կորցրած ճանաչել 52-րդ հոդվածի 1.1 կետը, ըստ որի «Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը եւ դրան նախորդող օրն արգելվում է կաբելային (մալուխային) հեռուստաընկերությունների կողմից վերահեռարձակել Հայաստանի Հանրապետությունում գործող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների վերգետնյա եթերային այն ծրագրերը, որոնք պարունակում են քարոզչական նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ որեւէ այլ ձեւով», քանի որ սա անտրամաբանական պահանջ է. ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը եւ դրան նախորդող օրը ոչ ոք իրավունք չունի հեռարձակել քարոզչական նյութ: